

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առիթով ընդունեցե՛ք, մեծահարգ նախագահ, Մեր ջերմագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Ձեզ և Ձեր հարգարժան գործակիցներին:

Թո՛ղ շեն ու հաստատ մնա հայության Մայր Հայրենիքը, Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում և թո՛ղ առավել ծաղկի ու առաջադիմի խաղաղության մեջ:

Սիրով և ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԷՋՄԻԱԾԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ընդունեցե՛ք, մեծարգո վարչապետ, Մեր սրտաբուխ շնորհավորանքներն ու բարի մաղթանքները անձամբ Ձեզ և մեր բարեխնամ կառավարության հարգարժան անդամներին, Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով: Մաղթում ենք Ձեզ և Ձեր հայրենանվեր գործակիցներին անսպառ ուժ և եռանդ, որպեսզի փայլուն հաջողությամբ պսակվեն մեր սիրեցյալ Մայր Հայրենիքի վերաշինության ու ծաղկման Ձեր ծրագրերը:

Սիրով և ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԷՋՄԻԱԾԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առթիվ հղում ենք Ձեզ և Խորհրդիդ հարգարժան անդամներին Մեր սրտագին շնորհավորանքները և ջերմագին բարեմաղթությունները և աղոթում առ Աստված Մայր Հայրենիքի և մեր ժողովրդի բարօրության ու առաջադիմության համար խաղաղության մեջ:

Ջերմ ողջույններով՝

ՎԱՋԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել իմ խորին շորհակալությունը Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առթիվ:

Խորին հարգանքներով՝

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության նախագահ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայաստանում սովետական իշխանության հաստատման 44-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր ջերմագին շնորհավորանքների ու բարեմաղթությունների համար ընդունեցեք, խնդրեմ, Ռեսպուբլիկայի կառավարության և անձամբ իմ շնորհակալությունը:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների
սովետի նախագահ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ շնորհակալությունը Սովետական Հայաստանի 44-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած շնորհավորական հեռագրի և սրտագին բարեմաղթությունների համար:

Նույն հանդիսավոր առիթով թույլ տվեք ցանկանալ Ձեզ քաջառողջություն և կորով Ձեր բեղուն գործունեության մեջ՝ հանուն աշխարհիս խաղաղության և հողագնդով մեկ սփռված մեր ժողովրդի միասնականության ամրապնդման:

Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ